

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճ.
• Գաւառացի • 2 Լիր
Վեցամս. • Կ. Պոլսոյ • 5 Մէճ.
• Գաւառացի • 1 Լիր
Օտար երկիրներու • 50 Ֆր.
Շանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱՔԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած քիւրճ խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագրի-
— Տնօրէնին պիտի ուղղուի, Ղալա-
թիա Սանտրոքըրար Հաստիսի թիւ
198, Նօրո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չիճ. ուր ած նա-
մակ չընդունուիր :
Չտուրած նամակի յօդուած, եւ
եւ չեն տրուիր :



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 31 ԹՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՐԵՆՈՐՈՒԹՅՈՒՆԻ Ի ԹՈՒՐԻԻՍ

Արեւելոս-Բիւն Սիւլէյմ, Երեւանի
Ժողովոյ Եւ Երեւանի 22 Երեւան

(Շար. և վերջ տես թիւ 2538)

Պ. ՊՈԼՐԻՍ. — «Գոհութեան արժա-
նի է տեսնել թէ Սըր Զարդ Տիւրքի
պէս ընդդէմդ իր կուսակցութեան
մէկ նշանաւոր անդամն առաջարկու-
թիւն մը կը ներկայէ ի նպատակ Պէր-
լինի դաշնագրին կատարեալ գոր-
ծադրութեան : Մինչև յարգ. այդ
կուսակցութեան անդամաց սովորու-
թիւնն եղած էր Պէրլինի դաշնագ-
րութիւնը պարսաւել իրենց բոլոր
ուժովն և անոր արամագրութեանց
մեծ մասն անգործադրելի հռչակել :
Սակայն այժմ որ այդ դաշնագրին
գլխաւոր կէտերը գործադրուած են,
միտիմարական է տեսնել թէ ընդդէ-
մագրի կուսակցութիւնն այնքան հա-
ւանութեամբ կընդունի զայն որ վեհ-
թագուհւոյն ուղերձ մը կառավարիկ
խնդրելով որ մնացեալ յօդուածներն
ալ անյապաղ գործադրեն :

« Թուրքիոյ բարենորոգումներն և
Բուլնաստանի սահմանաց ուղղութիւ-
նը վեհ. թագուհւոյն կառավարու-
թեան աշխարհավարութեանը զլրա-
ւոր առարկայն եղած են : (Հոս Պ.
Պոլսը Բուլնաստանի և Կիլիկիոյ վրայ
կը խօսի և կը շարունակէ այսպէս .)
Սըր Զարդ Տիւրք Սիւլէյմ վրայ ալ խօ-
սեցաւ : Բայց թէ մեր Սիւլէյմ նկատ-
մամբ մասնաւոր պատասխանատու-
ութիւններ ունիմք ոչ միայն Պէրլինի
դաշնագրին Գարդ յօդուածովն, այլ
նաև Անգլո-թուրք պայմանագրու-
թեամբ : Ես Ասիոյ նկատմամբ վեհ.
թագուհւոյն կառավարութեան պա-
տասխանատուութիւնները չեմ ժըխ-
տեր : Անգլիական կառավարութիւնն
ի սկզբանէ անտի կատարեալպէս ի
միտ առած է այդ պատասխանատու-
ութիւններն, և անցեալ օգոստոս
ամսոյ մէջ Լորտ Սալիսպրի այս նիւ-
թիս վրայ ուշադրութիւն հրաւիրեց
կապոյտ տետրակներուն պարունա-
կած ամենագործող ծանուցագրերէն
միոյն մինչդեռ : Լորտ Սալիսպրի ոս-
տիկանութեան, դատական գրու-
թեան և տրոց բաշխման ու հաւաք-
ման եղանակին մէջ բարենորոգում
ներ ընելու հարկը բացատրեց :

« Անկէջ ի վեր յանձնախումբ մը
զրկուեցաւ փոքր-Ասիա, և այդ յանձ-
նախումբն ընկերակցող Անգլ. հիւ-
պատոսը տեղեկագրեր զրկեցին մեզ
յաւով կըսեմ թէ այդ տեղեկագրեր
փոքր-Ասիոյ վիճակը խիստ տխուր
կերպիւ կը նկարագրեն : Երապէս,

ես այն կարծիքն ունիմ թէ ոչինչ ա-
ւելի գէշ կրնայ լինիլ քան Հայաս-
տանի մէջ կեցող այն չարիքները՝ զորս
մեր հիւպատոսը կը յայտնեն . բայց
թէ և Հայք Անգլիոյ համակրանաց
արժանի են, և կը յուսամ որ պիտի
վայելեն այդ համակրանքն, և թէ
պէտ Անգլիական կառավարութիւնն
և անոր պաշտօնատարներն Հայոց
համար կաշխատին, այսու ամենայ-
նիւ արդար չէ Անգլիական կառա-
վարութեան վրայ թողուլ այն պա-
տասխանատուութիւնն որ Դրան կը
վերաբերի՝ բարենորոգմանց գոր-
ծադրութեան մասին : Մեր մեր ձեռ-
քէն եկածն ըրինք, և Դրան ուշադ-
րութիւնն հրաւիրեցինք իրաց վիճա-
կին վրայ : Ես Թուրք կառավարու-
թիւնն արդարացեալ չեմ ուղերձ ընդ-
հակառակն՝ կը կարծեմ որ այդ կա-
ռավարութիւնը կրնար աւելի գործ
տեսնել. իսկ մեր հիւպատոսաց փո-
քր-Ասիան պարտելով ըրած նըկա-
րագրութեանց նայելով, իրաց վի-
ճակն հոն սարսափելի կերպիւ գէշ
է : Փայայեց յոռի ընթացքը, պաշ-
տօնատարաց կաշառակերութիւնն և
կեղծմունքը մեր յանձնարարն չափ
գէշ են : Անգլուստ է՝ Թուրք կառա-
վարութիւնն ամբաստանած ժամա-
նակ միանգամայն վեհ. թագուհւոյն
կառավարութիւնն յանդիմանել խոս-
տացեալ բարենորոգմանց անգործա-
դրութեան համար :

« Մեր պարտքն է այս վիճակին
գարման մը ընելու ջանալ, և թէպէտ
գոհարութիւնը մեծ են, այսու ա-
մենայնիւ Անգլիոյ չվայելի յուսահա-
տիլ : Առաջին կարգի կարեւորութիւն
ունեցող խնդիրներն են կարեւորութիւն
թագուհւոյն կառավարութեան, ո-
րոց մեծ ուշադրութիւն հարկ էր նը-
ւերել, ինչպէս են Պոլսոյ վրայ, Արե-
ւելեան Բուլնաստան, Գարաապոյի, Ալ-
պանիոյ և Բուլնաստանի խնդիրները :
Կ. Պոլսոյ մէջ խիստ մեղմադ. կու-
սակցութիւն մը, որ ամեն զիջմանց
հակառակ է, ի սկզբանէ անտի ընդ-
դիմութիւն ըրած էր Սուլթանին : Ես
կը կարծեմ թէ Սուլթանը կատարե-
լապէս համադրուած է որ իրեն յանձ-
նարարեալ աշխարհավարութիւնն իւր
երկրին բարգաւաճման միակ հիմն է :
(Միջ. և վերջ տես թիւ 2538)

« Փոքր Ասիոյ անմիջական ապա-
գային դաշով, Լորտ Սալիսպրի վեր-
ջերս նոր ծանուցագիր մը գրելով
յայտնեց թէ՝ ըստ տրամագրութեանց
Պէրլինի դաշնագրին՝ Թուրքիա պար-
տաւոր է ոչ միայն նոր և լաւագոյն
օրէնքներ հրատարակել, այլ եւրո-
պական և Ասիական դաւառաց մէջ
բարենորոգումներ գործադրել : Սըր
Զարդ Տիւրքի կասկածները աւելի չու-
նին : Անգլո-թուրք պայմանագրու-
թեան Թուրքիոյ վրայ գրած պար-
տականութեանց սխառութեան, վեհ.

թագուհւոյն կառավարութեան պարտ-
քն է բնաւ դիւանագիտական ջանք
չխնայել Ասիական Թուրքիոյ ժողովը-
րոց բարեւոյց կառավարութեան հա-
մար : Եթէ Անգլիական կառավարու-
թիւնն այս ընթացից մէջ յարատե-
ւել տալու համար ուրիշ որ և է
պատճառ չկենար, խրիմու պատե-
րագմէն յետոյ անցած դարձուած ոչ
յիշատակը պիտի բաւէր Անգլիական
կառավարութեան, որպէս զի այդ
ընթացքը չի ուղղու, որովհետեւ 1836էն
ի վեր Եւրոպիոյ մէջ պատահած բա-
նեւորուն մէկ մեծ մասն սակէ առաջ
եկած է որ խրիմու պատերազմէն յե-
տոյ ներկայած առիթներէն օգուտ
քաղելու մասին անհոգութիւն ցոյց
տուեցաւ . (Դիւ. և վերջ տես թիւ 2538)
Պէտք է յիշել թէ 1836էն մինչև 1874
անցած 18 տարուան միջոցին մէջ 14
տարի անգլոսական կուսակցութիւնն
իշխանութեան վրայ էր, և հետա-
քըքըքը բմ իմանալ թէ այդ կուսակ-
ցութեան վերաբերեալ նախարարը
1836ի խաղաղութենէն յետոյ իրենց
վրայ ինկած պատասխանատուու-
թեանց ուշադրութիւն ըրած էին
արդեօք : Պ. Կլաւտոն խաղաղութե-
ան չիւնց. բայց ես չեմ տես-
ներ որ Պ. Կլաւտոնի ազատական
նախարարութիւնը կամ Եւրոպական
ուրիշ որ և է աւերութիւն մ'իրենց վը-
րայ ինկած պատասխանատուութիւն-
ներն իրապէս հասկցած լինէին . այս
ալ խիստ զարմանալի է . որովհետեւ
ազատական նախարարութիւնը ոչ
միայն այդ պատասխանատուութիւն-
ներն տեսնեցին, այլ և ուրիշ եր-
կու տեսութեանց հետ երբեքի պայ-
մանագրութիւն մը կընքեցին, այնպէս
որ յիշեալ նախարարութիւնը մեծ
պարտականութիւն ունէին Թուրքիոյ
բարենորոգմանց հսկելու : Ասոնք
Թուրքիոյ ամբողջութիւնն երաշխա-
ւորած էին, և Թուրքիոյ ամբողջու-
թիւնը պահպանելու միակ միջոցն ալ
Թուրքիան բարենորոգել էր :

Պ. Պոլսը յետոյ Հելլենական խնդ-
րոյն վերադարձաւ, և հետեւեալ խօս-
քերով վերջացուց իւր բանախօսու-
թիւնը :

« Գալով Սըր Զարդ Տիւրքի առա-
ջարկութեան, չեմ կրնար ընդունիլ
թէ անցեղին նկատմամբ զօրութիւն
չունի այդ առաջարկութիւնը, Սըր
Զարդ Տիւրքի ամբողջ բանախօսութիւ-
նն Անգլիական կառավարութեան
արարքներուն գէժ ամբաստանագիր
մ'էր : Հետեւեալ, ես Պ. Համպու-
րի բարեխօսեալ առաջարկութիւնը
կը պաշտպանեմ : Կը յուսամ թէ ժո-
ղովս գոհ կըլինի տուած բացատրու-
թիւններէն : Թէ Ասիական և թէ Եւ-
րոպական Թուրքիոյ մէջ բարենորոգ-
մանց գործադրութիւնը պիտի շա-
րունակէ վեհ. թագուհւոյն կառա-
վարութեան ուշադրութիւնը զըրա-

ւել, և կը յուսամ թէ Բուլնաստանի
սահմանագլխոց խնդիրն ի մօտոյ պի-
տի կարգադրել խաղաղութիւնն ա-
պահովելու եղանակաւ : » (Միջ. և
վերջ տես թիւ 2538)

Ահաւասիկ հոս կը վերջանայ Անգ-
լիոյ երեսփոխանաց ժողովոյ յուլիս
10/22 ի նստին ատենագրութեան
այն մասն որ Պէրլինի դաշնագրին
գործադրութեանը կը վերաբերի .
եւ թէպէտ Պ. Մօնթի առաջարկու-
թեամբ վիճաբանութեան շարունա-
կութիւնն ուրիշ նստի մը թողուած
էր, բայց ոչ հեռագիրը, ոչ ալ մին-
չև երէկ տեսնուած Անգլիական լը-
րագիրը ծանուցին Սըր Զարդ Տիւրքի
առաջարկութեան վրայ վիճաբանու-
թեան շարունակումը :

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Տիարակներ 8 օգոստ.

Վերջնաւ բարենորոգմանց պէտքն
ամեն ժամանակէ աւելի զգալի եղած
էր . իսկ ժողովուրդն և ոչ մէկ խնայման
իրանալ տեսած էր . բայց առաջին ֆո-
միսէր Ապետին պէտքն հոս գալով ան-
միջապէս ձեռք առած իմաստուն միջոց-
ներուն շնորհիւ՝ նահանգին մէջ անգոր-
րութիւնն և բարեկարգութիւնը վերա-
հաստատեցան : Մինչև ցարդ կատար-
ւած սպանութեանց և առաջարկութեանց
զլխաւոր հեղինակներէն 24 Գարսի աստի
աքսորուեցան չորս օր առաջ : Այս ա-
տելի և ահարկու շարագործաց աքսոր-
ւիլը մեծ գոհութիւն յառաջ բերաւ ժո-
ղովրդեան մէջ, որ շնորհակարարութեան
ուղերձ մը կ'առարարէր աւ Վեհ. Սուլ-
թանին :

Տիարակներ 9 օգոստ.

Օրէնքը կողէ որ բոլոր տեսութեան
մէջ խողակի վրայ տասանորդի տուրքը
նոյն իսկ չերամատան մէջ և կշիւ ի ձե-
սին հաւաքուի, բայց հոս տասանորդի
տուրքը մետաքսէն առնուլ կողուի Մե-
տաքսի զլխաւոր վաճառականը և չերամ-
սնուցանող գիւղացիք խնդրեցին որ տա-
սանորդի տուրքը խողակներէն առնուի,
և առաջարկեցին տասանորդի տրոց հա-
ւաքելն 10 տակ աւելի տալ՝ եթէ իրենց
խնդիրն ընդունուի : Տեղական իշխանու-
թիւնն այս խնդիրն ընդունած չիլնելով,
յիշեալ վաճառականը և զիւղացիք կայ-
սերական Գովիսէրին զիւղեցին խնդրելու
համար որ պէտք եղած հրամանները ար-
ւին, որպէս զի ուրիշ տեղեր իրենց ար-
ւեստակցաց վայելած արտօնութիւններն
իրենք ալ հոս վայելեն և անբաւարար
չկրնին, այլ օրինաց արամագրութեան
համեմատ տասանորդի տուրքը խողակ-
ներէն առնուի :

Լոնտոն 11 օգոստ.

Հնդկաստանի փոխադրայն կը հեռա-
ղըրէ Անգլիոյ կառավարութեան թէ
Անգլիական զօրքն Աֆղանստանոյ մէջ
զբաւած տեղերը պարպել սխառ է :

Լոնտոն 11 օգոստ.

Անգլիական լրագիրը և ընդհանրա-
պէս Եւրոպական մամուլը Ֆրանչիսկա-

Յուրաքանչեւ կայսեր Կոստանի մէջ տեսակցութեան Առաջնորդ և Գերմանիոյ միջև կեցած բարեկամութեան, ինչպէս նաև թէ՛ Աւստրիոյ և թէ՛ Արևելից մէջ խաղաղութեան պահպանութեանը նոր երաշխաւորութիւն մը կը համարին :

Այս հոգիներ հոգիներ հոգիներ

Լոնտոն 11 օգոստոս.
Երեսօրհանաց ժողովին մէջ ելեւմտից նախարար Սըր Սթաֆորտ Կրեքսթըն Կարքան մը պատասխանելով ըսաւ թէ՛ կը յուսայ որ լորտերուն և երեսօրհանաց ժողովներն յառաջիկայ ուրախօրէն օրը պիտի դադարեն իրենց նիստերը :

Պ. Կոլտսլիթ չարաթ օրը ծանուցած առաջարկութիւնը բացատրեց, որ Եգիպտական գործոց մէջ Անգլիոյ միջամտութեան, և ներկային ու ապագային մէջ այդ միջամտութիւնն ծաղիկ կարելի եւ զամ կնճոց կը վերաբերէր : Պ. Կոլտսլիթ Անգլիոյ կառավարութեան ընթացքը պարտաւեց :

Սըր Սթաֆորտ Կրեքսթըն Պ. Կոլտսլիթի պատասխանելով ըսաւ թէ՛ կառավարութիւնն Եգիպտոսի մէջ ի նպատակ Եգիպտոսի պահպանութեանը չմիջամտեց, այլ անխնայութեամբ արգելելու և յոռի վարչութեան վերջ մը տալու նպատակաւ միջամտեց : Պահանջատեար միջամտութիւնը որոշ միջոցաւ մ'եղաւ : — Սըր Սթաֆորտ Կրեքսթըն կը յարէ թէ Սուլթանը կատարեալ իրաւունք ունէր իւր գերիշխանութեան ներքեւ գտնուող իշխան մը պաշտօնանկ ընելու, որ Գրան Հետ ունեցած կապակցութիւնը խզելու կ'աշխատէր : Ելեւմտից նախարարը վերջացուց ըսելով թէ՛ նոր հրովարտուող ժառանգութեան կարգին չգալէր, բայց Խոփվը կ'արգելու փոխառութիւններ կամ միջադէպային պայմանադրութիւններ կ'ընէ՝ առանց Գրան վաւերացման :

Բէյքէր 11 օգոստոս

Բէյքէր Լոյս լրագիրը կը կարծէ զի նա թէ՛ Անտառի կոմիտէ գործէ քառուիք մօտապէս :

Երբ լրագիրը կըսէ թէ՛ Արապ-Թապեայի խնդրոյն վրայ Գաղղիա և Խալիսա Աւստրիոյ տեսութեանց հաւանութիւն կուտան :

Լոնտոն 11 օգոստոս

Օսմ. Քօնս.	41 1/2
Փոթ.	1865 43 3/4
"	1869 43 3/4
"	1871 55 1/8
"	1872 24 3/4
"	1873 42 7/8
Կղկղիւր	72 3/8

Անգլ. Քօնս.

Օսմ. Քօնս.	11.85
Գաղղ. Քօնս.	50/0 82.75
"	" 84.90
"	50/0 118.60

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պայտերական հրամանաւ.
Ֆէրիք Գէրիմ փառան Ագրիանուս պոլսոյ ընդհանուր հրամանատար և կուսակալի փոխանորդ անուանեցաւ :

Թուրք լրագիրը կը ծանուցանեն թէ՛ մայրաքաղաքի Սերպիական գետ պանը նոր ծանուցագիր մը զրկեր է առ Բ. Դուռն, յորում Սերպիոյ պահանջները վրայ Ալբանիացեաց և ուրիշ հրոսակաւոր կողմանէ Սերպիական ժողովրդին տրուած վնասուց փոխարինութիւն կը պահանջէ : Բ. Դուռը զրկած պատասխանին մէջ յայտնեց է թէ՛ պատմած եղել լուծիւնք չափազանցեալ են, և թէ՛ տեղի ունեցած դէպքերն Օսմանեան երկրէն Սերպիոյ թողուած հողերուն վրայ Սերպիական հպատակութեան չափորոշող ժողովուրդներ ընակելէն յառաջ եկած են : ուստի Բ. Դուռը Սերպիոյ պահանջը կը մերժէ յայտարարելով որ գործին պատասխատուութիւնն Եւրոպոյ կը վերաբերի և ոչ թէ՛ Օսմանեան տէրութեան :

Յունական Ֆար Թուրքիոյ լրագիրը կը ծանուցանէ թէ՛ Պ. Վրայքա Արմէնիի համարութիւնը հաս-

նելու վրայ է, և եթէ Հելլենական խնդրոյն վրայ բանակցելու համար մինչև չարաթ մը Օսմ. պատուիրակները չանուանին, Հելլենական երկրորդ պատուիրակը պիտի մեկնի մայրաքաղաքէս :

Երէկ ներքին գործոց նախարար Գաթրի փառան, Թիգանթարանի վերատեսուչ Ալի Սայիտ փառան, առևտրական նախարար Ճէփուէթ փառան և երեսօրհան նախարար Զիւհտի Ֆէշնաթին ելեւմտից պաշտօնատան մէջ խորհուրդ կազմելով՝ պաշտօնատանց ծախքերը թերթեցնելու խնդրոյն վրայ խորհրդակցեցան :

Բ. Դուռն Ծքօտրայի նահանգին կայսերական Գոմիէր Խալիսա պէյը Զէթինեյէյի գետական անուանել որոշած լինելով, այս մասին ըստ սովորութեան Գաթառաղի իշխանին կարծիքը հարցուց, որ պատասխան զորկեց թէ՛ գործութեամբ կընդունի Խալիսա պէյի անուանումը :

Սպարապետի դուռը պէտք եւ զամ միջոցները ձեռք կառնու, որպէս զի Արեւելեան Բուլղարի ընտելի եղող և այժմ զինուց ներքեւ գտնուող Օսմանեան զօրքերն իրենց տեղերը զըրկուին :

Կայսերական Միւլքիէ դպրոցին պարգևատրութեան հանդէսը վաղը պիտի կատարի :

Ռուսական վերջին զօրքերն օգոստոսին (ն. 8.) մեկնեցան Պուլխարիայէն, ուր Ռուսք այժմ միայն 50 թնդանօթ ունին : Քանի մ'օրէն այս թընդանօթները Եւրոպայէն Ռուսիա պիտի զրկուին Ռուսոսուգի ճանքով :

Քաղաքապետութեան մէկ ազգը կը ծանուցանէ թէ՛ ալիւրին ձիւնը բարձրանալուն պատճառաւ, այսօրւնէ սկսեալ հային զինը 65 փարսարժաթէն 70 փարսարժաթի հանւած է : Իսկ մէթալիքով 2 զրուշի պիտի ծախուի :

Ֆար Թուրքիոյ կը ծանուցանէ թէ՛ Պեյուք տէրէի պանդոկին մէջ հրդեհ ծագած ժամանակ Պ. Վրայքա Արմէնիի դպր. գործողը Գոթի առնուն Յոյն մ'էր, որ ձերբակալուած է : Իսկ գործին Հելլենական պատուիրակին ետ տրուել է :

Վագրթ կը ծանուցանէ թէ՛ մայրաքաղաքիս գետակներէն միոյն եկած հեռագրոյ մը նույնով, Սամու կղզոյն մէջ ժողովրդեան միջև կըռուներ ծագել են, բայց կառավարութիւնը պաշտօնական տեղեկութիւն մը չէ առած այս մասին :

Կղկղները բանող Մախսուսէի շուգեհաւուց փնտրել գոհացուցիչ լինելէ շատ հեռու է : Կիրակի իրիկուն կամուրջէն կղզի դնացող շոգեհաւուն ծինելովը պատող տախտակները բռնուրիկելով անկարգութիւն երկիւղ և չփոթութիւն ծագեցաւ ուղեւորաց մէջ, և մեծ գոհարութեամբ հաղիւ հրդեհին առաջը կըցաւ առնուիլ : Երէկ առաւօտ ալ կղզիէն եկող երկրորդ շոգեհաւուն անիւններէն մին մնասուելով, շոգեհաւուն չը կըցաւ ճանքան շարունակել և մէկ ժամու չափ Գաթր գիւղի առջև կեցաւ, մինչև որ մնասը նորոգուեցաւ : Այս արկածները տարակոյս չկայ թէ անհողութեան արդիւնք են ի վրէնս հասարակութեան, որ փոխանակ իւր վճարած դրամին փոխարէն հանդատութիւն ու ապահովութիւն վայելելու, ընդհակառակն երկիւղ

տագնաւ և անհանգստութիւն կը կրէ :

Գերմանական կառավարութիւնը Ֆրանքօ-Գերմանական պատերազմին ժամանակ Գաղղիայէն առնուած Ալգաս-Լօրէնի նահանգին վարչական գործերը գիւրացնելու համար տեսակ մ'ինքնօրինութիւն տուաւ այդ նահանգին, և Մարէշալ Մանթէյֆլ կառավարիչ կարգեց՝ կայսեր տեղակալի տնտեսով :

Անգլիոյ կառավարութիւնը փաբըր-Ալիսա զրկած հիւպատոսներէն երկուքին համար 800 և 900 ոսկի և միւսներուն համար 400—500 ալիս ոսկի տարեկան թոշակ որոշած է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԹՅՈՒՆ			
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ			
Կրկ. իրիկուն դպրոցեաց	12.16		
Սյո առաւօտ դպրոցեաց	12.16		
Կէս օրին	12.21		
Բուլղ. երկրթութիւն	Փր. 43,		
Թղթագրութիւն	Ժր. 897 1/2		
ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՄՈՑ			
31 Յունիս			
Անգլ. լիրա	ըր. 109	28	
Նարթիս ոսկի		87	26
Խմբակաւ Ռուս		90	2
Գրք. Կի		51	20
Մէ. հիւսիսի տարբերութիւն		6	30
Մէ. Կի		49	
Մէ. Կի		17	30
Պրիմ		450	

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կիրակի առաւօտ իսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ ճերմակեանի խնդրոյն առթիւ պատահած ցուալի դէպքին պարագայներն հետեւեալ կերպիւ կը պատմուին :

Ճերմակեան վարդապետը Ս. Խաչի եկեղեցւոյն քարոզչութեան հրժարած էր թաղ խորհրդին մէկ ազգարարութեանը վրայ : Ինչպէս կը յիշեն ընթերցողք, այս վարդապետին համար զրոյց եղած էր թէ՛ սուրահարական յարաբերութիւններ ունի : Ճերմակեան բաւական ժամանակ լռելէ ետեւ՝ դատ պահանջած էր, և իւր խնդիրը կրօնական ժողովոյ կողմէն կը քննուէր : Բայց միանգամայն Ս. Խաչի թաղն երթեկելէ դադարած չէր, և կերելի թէ՛ յաջողած է ժողովրդէն մաս մը համազելու, որ զինք քարոզիչ խնդրին : Այսպիսի համազիչ ճարտարութեան մ'ամեն մարդու գործ չէ, և այս արուեստը մի միայն այն դպրոցին մէջ կարելի է ուսանիլ որոյ վրայ Պ. Բօլ Պէր անցեալներն երկարօրէն խօսած էր Գաղղիոյ Աղգային ժողովոյն մէջ :

Շաբաթ օրը թաղեցյններէն բազմաթիւ պատգամաւորութիւն մը Պատրիարքարան երթալով կը խնդրեն որ անպատճառ կիրակի օրը ճերմակեանը Ս. Խաչ զրկուի :

Կիրակի օրը ճերմակեանը Ս. Խաչ կերթայ Պատրիարքարանէն նամակաւ մը, որպէս զի իւր հիւր վարդապետ մ'առ ժամանակեայ կերպիւ եկեղեցւոյն ընդունուի, մինչև որ իւր խնդիրը լուծուի : Բայց չը գիտցուի ինչ պատճառաւ թաղական խորհուրդը վար կը զնէ թէ՛ վարդապետը և թէ՛ Պատրիարքարանի նամակը կըրուի նաև թէ՛ առաջերէց Տէր Գրիգորը նամակը պատուել է, բայց չենք գիտեր թէ՛ այս զրոյցն ստոյգ է : Ժողովրդեան մէկ մասն, որ զխաւորապէս կամ խիստ անուսուժն մարդոցմէ կամ դպրոցէն նոր եղած համբալներէ կաղմուած էր, կը յուզուի : ասոնք բռնութեամբ ճերմակեանը եկեղեցի կը ատնին և կտալեն որ քարոզ տայ : Նա ալ հաւանութիւն կուտայ՝ հաւատակ թողական խորհրդոյ ազգարարութեան, որ իմացոյցած էր

իրեն որ եթէ քարոզ տայ, խռովութիւն պիտի եղնէ, երբ վարդապետը բռնը կեննէ, պոռագողներ կը լինին թէ՛ պէտք է քարոզը դադարի : Ասոր վրայ եկեղեցւոյն մէջ բարեկարգութիւնը կը խանգարի : Խուսի մ'երիտասարդք թաղ խորհրդոյ առնեալեալ Հարէնց Աբրահամ արան կը գանակոծեն և հանդերձները կը պատուեն, վասն զի ըսած է եղեր թէ՛ այս եղածը թուումեցածութիւն է : Պատրիարքարանի թուրքերէն լեզուի Ա. քարտուզար Կարապետ է. ֆէնտին և ուրիշ մ'ալ կը գանակոծուին : Այս անկարգութիւնը ոտարկանութիւնն իմանելով խուսի մը զօրք Ս. Խաչ եկեղեցւոյն կը հասնին սուլաներով, քրիստոնեայ եկեղեցւոյ մը մէջ հոգեւոր խրատ լսելու փափաքող ջերմեանի և բարեպաշտ հաւատացեցող բարեկարգութիւնը պահպանելու և զանոնք իրարու գլուխ ջախջախելէ արգելելու համար : Սուլան ներուն փայլը կիւքերը բաւական հանգարտեցուց, և քիչ մը վերջն առնալ մարդ իւր առնը դարձաւ և զօրքը մեկնեցաւ :

Այս գործին մէջ ըստ ամենայնի անխորհուրդ ընթացք մը կը տեսնենք թէ՛ ճերմակեանի և թէ՛ թաղին երկուստաւորութեան մէկ մասին կողմէն : Խնդրոյն վրայ անխորհուրդութեամբ և անապառ կերպիւ նայողներն անհնար է որ այդ դէպքին պատճառ եղողները չմեղադրեն : Պատրիարքարանը՝ որ ճերմակեանի նամակ տրուած էր, թաղեցւոյ մէկ մասն որ ճերմակեանի խնդիրը չվերջացած և դատին քննութեան եղբակացութիւնը չառնուած՝ զայն բռնի քարոզիչ խնդրած է : Իսկ թաղ խորհրդոյ ատենապետն և Կարապետ է. ֆէնտին գանակոծելով ազգային իշխանութիւնն, օրէնքն և ազգը ուտնհար ըրած են :

Տիգրանակերտի տաղնորդական կռիւներուն վրայ, որոց տխուր պատկերն անցեալ շաբթու հրատարակած ենք, Ս. Խաչի դէպքն ևս գալով օտարաց առջև կը ցուցնէ թէ՛ Հայք թէպէտ Սահմանադրութեամբ կը պարծին և Հայաստանի ինքնօրինութեան կը փափաքին, անկարող են նոյն իսկ եկեղեցւոյ մէջ իրենք զիրենք կառավարելու և բարեկարգութիւնն ու օրէնքը յարգելու, թէ՛ իրենք քաղաքական ազգաց հետ բաղդատմամբ տակաւին պարզապէս տղայ են, և տիրացուական վեճերով կ'զբաղին, փոխանակ իրենց բոլոր ոյժն ազգային յառաջդիմութեան նըւերելու :

Ահա մինչդեռ Ս. Պատրիարքն հրաժարուած Պէյքօղ ժամանակ կանցունէ, ազգային թէ՛ ներքին և թէ՛ արտաքին գործերն առ խաբխալ կընթանան, և մերթ ընդ մերթ այսպիսի անակնկալ դէպքեր կը ցուցնեն թէ՛ Հայոց ազգը մինչդեռ 61 դ. յօգուածին ստուերին ետեւէն կը վաղէ, Եղորտի տաղաբաշխին պէս խորխորատ ինչպիսի վտանգի մէջ է :

Կը լսեմք թէ՛ Արմաշու միաբան Ներսէս վարդապետին Տիգրանակերտի փոխ առաջնորդ անուանիլն ետ մնացեր է, կամ մանաւանդ ընաւ տեղի չէ ունեցեր այդպիսի անուանում մը, այլ միայն խօսքն անցեր է Խառն ժողովին մէջ՝ առանց որոշման :

Ոստիկանութեան դուռը բանտարկեալ իսկիւտարցի ազգայնոց աղաւտութեան համար ոտարկանութեան դրան գործակաւոր Գառապարեան Յարութիւն էֆէնտին քանի օրէ ի վեր տարած ջանք և աշխատու

Թեանց հակառակ յիշեալ ազգային քաղաքական կրթման:

Երէկ ալ Գաբու քէհեասի Զրէնկեան Արարհամ Էֆէնտին ի դիմաց Ս. Պատրիարք հօր ստորկանութեան վըսեմ. նախարարին գնաց և նոյնպէս ձեռնադրեց իր արձաւ: Վասն զի վըսեմ. նախարարն յայտնեց է թէ գործընթացը որոշմանը ենթարկուած է, թէ բանտարկեալք յատկապէս կազմեալ յանձնախմբին մը միջոցաւ կը քննուին և թէ խնդիրը խիստ ծանր է, հետեւաբար յարեւ է թէ անկողինը է նոյաւ ազատութիւնը:

Կրօնական ժողովն երէկ դարձեալ հանրաժանօթ ձերբակրանի խնդրովն դադարեցաւ: Բայց խնդիրը չը կրնայի վերջանալ, չորեքշաբթի առաւել մնաց:

Եէնի Գաբու թաղին մէջ երեսփոխանական ընտրութիւն կատարուելով, Զրէնկեան Մարութ և Էնքանքեան Պողոս Էֆէնտիններն ազգային երեսփոխան ընտրուեցան:

Կիրակի օրը Գում-գարուի Պէդէան և Լուսաւորեան երկուսն վարժարանաց պարզեալաշխութեան հանդիսին ներկայ գտնուող ուսումնաւոր ազգայինք դռնութիւն կը յայտնեն հանդիսին վայելչութեանն ու կանոնաւորութեանը վրայ:

Կը լսեմք թէ Ամեն Խորհման և Գեր. Մեղիսեղեկ սրբազաններն անցեալ շաբթու Գում-գարուի Մէղալուրեան արդիւնաւոր վարժարանին այցելութիւն տալով՝ երկուսն ուսանողաց ուսումնական վիճակը քննել և վարժարանին յառաջդիմութեան վըրայ մեծ դռնութիւն յայտնել են:

ԹԳՅԱՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

14/28 յուլիս 1879 Սերասիա ԲԱՂԱԲԻՍ ՃԳՆԱԽՈՐԵՆԵՐԸ

... Խմբագրատեալ Տէր Մասիս Պատուական օրագրոյ:

Ժամանակէ մ'ի վեր քաղաքին մէջ եւրեցած ձգնաւորութիւնն անուն հակա-մարդկային խաժամութիւն տարրքներուն վրայ բաւական ծանօթութիւններ տըւած եմք լրագրաց միջոցաւ: այժմ ևս կուզեմք նոյն խաժամութիւն ներկայ կացութեանը վրայ խօսիլ:

Համայն ազգայնաց յայտնի է որ այն ձգնաւոր կոչուածները՝ ծոյլ և անգործ երիտասարդներն ու պատանիներն են, որք կրօնը դիմակ ըրած՝ Հայ ժողովուրդը տղիտական նախապաշարման, բողոքականութեան, մոլեկրօնութեան մասնելու և նորա ազգային ու ընկերական գլխացումներն մարկու նպատակին կծուացնելու քաղաքին Հայոց հասուցած նիւթական և բարոյական վնասները բուժելու համար բաւական տարիներու կը կարօտիմք:

Թիւեաները՝ տեսնելով որ այլ ևս չսկսի կրնան իրենց «տօլմաներն» ժողովուրդեան կլկեցնել: մի այլ հնար մտածեցին. մի մասը՝ որոյ գլուխ կը գտնուի նոր աշխարհի հին մարդաբնէ՝ Ստեփան Անանիեան, գնաց որդացաւ Ս. Նշանի վանք:

* Սոյն ձգնաւորաց ծագումնն ի վեր քաղաքս դադարեց թերթ մը (ձեռագիր) կը խմբագրուի, որ մինչև ցարը 20-25 թիւ հանած է, սակայն մեծաւ մասովն ձգնաւորաց մարդկութեան բնու ազգին վնասակար լինելը ապացուցած և ժողովուրդը նոյա թակարդներէն դուրսացուցած է:

* Ասոնց գլխաւորներն են Ստեփան Անանիեան, Մ. Նոսրատեան, Յ. Չառլը՝ ձեռն, Տ. Նկարաբեի Բնդապապեան: Բաւայի է որ սոցա ձեռքը Ս. Պէդային դուրսը մ'ալ կայ, ուր Բողոքականութեան գլխա կարուի աշակերտաց:

քը՝ միարան լինելու կեղծօք, և այժմ չնորհիւ վանահօր անփութութեան վնասը՝ բոլոր մատակարարութիւնը այն ազգա-վընաս երիտասարդաց յանձնուած է, որք ամեն չարքը կը դործեն և անպատիւ կը մնան:

ձգնաւորաց միւս մասն ալ, որոյ պարագայի կը դառնուի Մանուկ Նոսրատեան, երբ զգաց իւր Սերասիայի առջին խայտառակութիւնը, իւր ազգակրօնայ գաղափարները դիւրութեամբ ուստածելու մտօք կազմեցին մի ընկերութիւն «Մարդասիրական» անուամբ, իրենց հանդերձներն առ երեսփոխանութիւն և ազգասիրութեան քօղին յետին պահելով:

Խմբագրատեալ Տէր, կրնաք մակարեւել թէ այսօրիս անձերէ կազմուած ընկերութիւն մը ո'ր աստիճան վնասակար է ազգին և մարդկութեան, և թէ ո'րչափ հրէշայի հետեւանք պիտի ունենայ...

Բայց բերկրութեամբ սրտի կը ծաւաւցանեմք որ Ս. Պէդային Վարդութեան Խառն ժողովն ի նկատի առնելով նոյա սքողեալ խորհուրդները, չվաւերացուց սոցա կազմած ընկերութեան կանոնադիրը, թէ և նորա ժողովոյն անդամները «անհատաւոր, անկրօն և անաստուած» անանեցին, ինչպէս որ սովոր են իրենց ծիրած և միջնադարեան գաղափարաց հակառակողներուն միջոց այն բաւերը յատկացնել:

Խմբագիր Էֆ. Ներկայս ազատասէր Մասեաց մի խորը դետեղելու և Զերլուր խորհրդածութեամբն հանդերձ հըրատարակելու չնորհելով կը խնդրէ:

ձգնաւորութեան յաւերժական ստիճ

Երգեկա 10 յուլիս 1879

Տէր.

Շնորհակալութեամբ կարգացնեք պատուական Մասիսը մէջ Երգեկի նկատմամբ դրուած նամակը: Իցիւ թէ մէկ Բոսթա առաջ եկած ըլլար, որ նոյն ատեն Երգեկ վարդապետ հօս կը գտնուէր, և ինքն ալ կարդալով ամաչէր և թերես զգաստանար:

Ահա պատմեմ ձեզ ինչ ընդունելութիւն գտաւ այս անգամ յերգեկ Ս. Էֆ. միածնէն վերադառնալով:

Վարդապետի տօնին կիւրակէ օրը պատարագելու թոյլտուութիւն խնդրելով, մեր թոյլ տեղապահն ալ չէ կրցեր մեր ժեյ, ուստի եղաւ ժամարար: Ժողովուրդն արդէն նորա դէմ դրուուած ըլլալով դէս ու դէն սկսած էր բանասել և անարդել զայն. նորա զգեստաւորւած միջոցին՝ շատեր եկեղեցոյ բակը կը պրտային. «40 ական փարա պղինձ տուէք իւր ժամուց» (պղինձ դրամը բընաւ շէն աններ տար հոս) Այս միջոցին էր երբ լուր եղաւ թէ՝ Երգեկ վերը պատարագի զգեստներուն չի հաւեր, սիրաւ ժողովուրդը պրտալ: «Եթէ շատ թիւ թիւ հետք ձեռք մը զգեստ պարտուցուր» եւ եւ: Եկեղեցին բնաւ մարդ չէր մնացած՝ նորա քարոզ տուած միջոցին: Ժամանակ չի ներեր որ երկարօրէն պատմեմ տեղի ունեցածները: Վերջը հետաքրքրութեամբ կը հարցնէ երկրպագի մը թէ՝ «Ինչո՞ւ ժողովուրդն ինձ հետ այսչափ խտուրթեամբ վարուեցաւ» այն անձն ալ կը պատասխանէ թէ «բոլոր ընթացքիդ, քու ստախոսութեանդ և չարամտութեանդ, քու Բարթող Սուրիդ (որ այժմ ձեր շնորհիւ ստրկաւազ եղած է), և վերջապէս քու անխելամ վարմունքիդ պատճառաւ է»:

Երգեկ երբ այս պատասխանը կ'առնէ, զայրանալով «հաստատէ» կըսէ: Նոյն ժամուն այն անձն ալ Հայրենիքէ այն ինչ թիւ թերթը կուտայ Երգեկի, որուն մէջ Բ. Սուր կը գրէ թէ, «Արարկեցիք մեծ ծածմալ սեղան մը պատարաստած էին»:

Երգեկ կըսէ թէ «ես տեղեկութիւն չունիմ»: Չայս կըսէ և կը կարմրի: Գործեալ կը կրինէ նոյն երեգացին: «Ընկերական վարժարանի անօրէն-գաղափարներն պատուէր դէմ ալ յարձակեցար առաջին անգամ դաւադրութեամբ թէ նա Երգեկ կը նմանի և թէ խմատակ մ'է: Երեգացիք որ գետ անտեւ չէին նոյն դաստաւուն, որ է Մեծ. Սարգիս Էֆ. Ամատուի, մըտաւ տանջութեան մէջ ինկան. բայց դասա-

տուն ձեր մեկնելէն վերջ հօս հասաւ, ալ համարուեցան թէ՝ դուք թշնամանած էք զայն, զի նա քանի մը Երգեկներ և Սուրեր կրնայ իրեն աշակերտ ուսուցանել: Ահա այս մասին ալ դուք ժողովուրդեան աչքէն ելաք եւ եւ: Երգեկ ալ չէր զիտեր այս վայրկեանին թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէր ինք և ո'ր աստիճան անպատուած էր:

Երգեկ իսկոյն Մեծ. Գանիէլեանց տունը երթալով կրսէ իւր «ես չէի գիտեր թէ նոյն սեղանը ձեզնէ էր, մանաւանդ չէի ալ գիտեր որ Սուր այսպէս յօղուած մը գրած էր: կը խնդրեմ ներէք»:

Նոյա ալ աղիւսաբար կը պատասխանեն թէ «այդ բան մը չէ, բայց զարմանալի է որ Բարթող Սուրի պէս մէկը ձեր բով ապաստանարան կը գտնէ»:

Անձնական տկարութեան պատճառաւ չի կրցի կանոնաւոր նամակ մը գրել, մանաւանդ թէ՝ բօստան ալ մեկնելու վըրայ է: Զի մտնանք ըսելու որ՝ Երգեկ զեցեաց Թաղ. Խորհուրդներէն մերժուեցաւ Երգեկի համար պատարագ ընելու և ընդունուեցաւ մի միայն Ս. Սարգիս եւ Երգեկը Թաղ. Խորհուրդէն, որոնք խիստ ուսմիկ մարդիկներ էին:

Երգեկ ուղեք երկուշաբթի օր (որ տօն էր) դպրոցներու աշակերտներն հաւաքել տալով՝ այցելել, բայց մերժուեցաւ. կիւրակէ օրն ալ զինքն վարժարանը մասնաւոր քննութիւն կար, հոն դնաց միայն. ինք կարծեք է թէ՝ իւր համար աշակերտութիւնը հաւաքուած էին, բայց յետոյ իրեն ըսուեցաւ թէ՝ արդէն մասնաւոր քննութիւն մը պիտի ըլլար:

Առանց ամենալու յանախակաւ Ընկերական վարժարանի եկաւ կիւրակէ օր, ուր հիմնադիրը Խորհուրդ ունէին նոյն օր: մի քանի հարցումներ ըրաւ վարժարանին նկատմամբ պաղարկելութեամբ, որոց պատասխաններն ալ ցարտ կերպով ընդունեց, և ժամկոչի մը չափ յարգ չի գտնելով՝ մեկնեցաւ:

Օրթաքէջ 30 յուլիս 1879

... Խմբագրատեալ Տէր.

Հայկական կրթարանն, որպէս յաւօք ծանուցիք Զեր պատուական թերթին մէջ, իւր երրորդ տարւոյ պարզեալաշխութեան հետեւ եւալ օրն աղետալի դժբախտութեամբ զոհ եղեալ այն սոսկալի հրդեհին՝ որ գիւղիս երրորդ մասն յաւեր գարձոյց, միայն աշակերտաց դոյնք մեծ մասն հնար եղեալ մեզ զերծանել. իսկ զըպրոցական կարասիք, պաշարք և այլ ուսումնական պիտոյք, 300 ոսկոյ արժողութեամբ, հրոյ ճարակ եղին բոլորովին:

Դառն էր այս արկածն. բայց մեք միմիկարութիւն ունիմք շնորհակալ լինելու Ամեն. Ս. Պատրիարք Հօր, մեծաւոր ազգայնոց, որք կը փութան համակրանք չըրպապետել Հայկական կրթարանի կրած անանկալ դժբախտութիւնն. ի մասնաւորի՝ շնորհակալ եմք Մեծ. Հայ Խմբագրատեալ տաց, որք խորին ցաւակցութեամբ չեն դադարել ազգին ուշադրութիւնը հրաւիրելէ ի նպաստ վերականգնման կրթարանին:

Այս ամենայն համակրութիւնք, որ միակ են վարձք մեր երկարժամանակեայ տարժանեքի անձնակրթութեանց, կը խրախուսեն զմեզ ի նորոգ և յետանդուն աշխատասիրութիւն, ուստի և բախտաւոր եմք ծանուցանել թէ Հայկական կրթարան վերստին պիտի բացուի յառաւջիկայ օգոստոս 15ին յՕրթաքէջըն: Գարձակադոյն չէնք մը մէջ նորա նոր բարեկարգութեամբ:

Բացման և դասախօսութեանց սկիզբնաւորութեան առաւել յառաւջադոյն պիտի ծանուցուին:

Անձնուէր Զեր

Թ. Գաբու

Կ. Պոլիս 30 յուլիս 1879

... Խմբագիր Տնօրէն Մասիս

լրագրոյ:

Դպրոցատեալ-Արեւելեան ընկերութեան Տնօրէն Խորհուրդս կը փութայ յընդ Մեծարդոյ Խմբագրութեանը իւր պաշտօնավարութեան Բ. Զ. եւաւմանայ հաշուեցուցակը ի գիտութիւն այն ամեն բարեսէր ազգայնոց, որք չեն զլսնար քաջալերել զընկերութիւնս իրենց նպաստներով:

Յոյս մեծ ունիմք, Տէր, որ ազգասէր և յառաջդիմասէր անձինք պիտի յարատեւեն իրենց նուիրատուութիւնքն ի բարգաւաճումն և յառաջդիմութիւն ընկերութեանս:

Աներկաց ըլլալով, Մեծ. Տէր, որ պիտի հաճիք հրատարակել Զեր ազգօգուտ թերթին մէջ սոյն հաշուեցուցակը կանխաւ մեր շնորհակալութիւնը կը յայտնեմք Զեր:

Մնամք յարգանք

Ատենադպիր ֆ: Ատենապետ

Թ. Ն. Պէյաֆեան Ս. Տաւադէան

ՀԱՍՈՑԹԻ ԵՒ ԾԱՆԹԻ

Դպրոցատեալ-Արեւելեան ընկերութեան

1879 տարւոյ երկրորդ եւաւմանայ ըրծ: Զանի (ապրիլ 15 ցօղել յուլիսի)

ՊԱՐՏԻ

1879 տարւոյ առաջին եւաւմանայ ըրծ: Զանի (ապրիլ 15 ցօղել յուլիսի)

Առաւելութիւն 90,778

Առաւելութիւն ընկերաց դահլ 5347 95

Առաւելութիւն ընկերաց Ուսումն: Թոյի ճիւղի, դահլ. արծ. 865 824 20

Նուէր հաւաքեալ ի Տիփիս 4507

» » ի Մուշ 1180

» » ի Տրապիզոն 989 25

» » ի Կ. Պոլիս 215 80

Պարահանդիսի ապագիկներէ 2822 30

Կարոնք և տոկոսք 226 50

Գումար դահլ. ոսկի 104,868 45

ՊԱՆՈՒՆԶ

Գ. Կ. ոսկի

Ծախք Մշոյ վարժարանի 4061

» Վարդապետի վարժ. 2154 25

Ընկերութեան վարժարանաց ընդհանուր տնօրէն Պ. Մկրտիչ Սալքեանի յանձնեալ իւր ճանքու և այլ ծախսը համար 5199 25

Տպարարական և այլ կեդրոնաւ կան ծախք 1990 80

Կարասիք 1260 65

12,643 95

Կիւր, առաւելութիւն հասութիւն 92,222 50

104,868 45

Վասն ճշգրտութեան

Գանձապետ Համարակալ

Կ. Պ. Սեֆեան Գ. Շնորհաւոր

Կ. Պոլիս 28 յուլիս 1879

Ի Լ Ա Ն

Նիդամիյէ իշուն միւպայեա օլուն. մնք իւզըն միւնագասաւր տէրտէսթ ինրա օլաղընա իւն քըլընը օլան էլիլ պին քիլէ Գըլընա հանթանըն կէօրիւլէն լուղըմ իւզընին մըքտալը իւզ պին քիլէյէ իպլալ վէ չէրա-հէր քիլէսի լիւրայի Օսմանի երիւզը ճիսապը իլէ օթուզ զրուշտա թալի-պի իւզընինտէ քալըն վէ իւրաղ սա-պըզ վէն իլէ իշպու մանթ թէմուղըն օթուզ պիլընին սալը կիւնիւ քարալը գալթիսի միւնամիլէմ պուլունըն օլաղընտան, տահա աշաղը թալիպ օլաղընըն եէվմի մէքըլըրտէ մալիյէ խաղինէյի ճէլիլէսինտէ աշաղ նէգալըն թալիպիլէն միւրաճաթ իյ-լէվէլիլ իւն օլունըն:

28 թէմուզ 1879

Պապը Սէրասիէ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՈՒԹԵԱՆ

ԱՆԳԼԻԵՐԵՆԻ ԼԵՁՈՒԻ

Աշխատանքային Մ. Պաղտատարեան
Հիւսիսային

Անգլիերէն լեզուն դիւրաւ ըն-
տեանապաշտ և քիչ ատենի մէջ խօսիչ
սորվելու համար յարմարագոյն և մէկ
հատիկ գործի մը կրնայ համարուիլ
այս նոր գիրքը, որ 240 երեսէ բաղ-
կացեալ է և կը պարունակէ հետեւ-
եալները.

Մասն Ա. Գերականական կանոնները.
— Մասն Բ. Զրուցատրութիւնը : —
Մասն Գ. Անգլիերէնի յատուկ ոճերը :
— Մասն Դ. Համառոտ նամականիտ : —
Մասն Ե. Համառոտ Բառարան Հայե-
րենէ յԱնգլիերէն : — Մասն Զ. Համա-
ռոտ Բառարան Անգլիերէնէ ի Հայերէն :

Արամեան տպարանէն 'ի լոյս ըն-
ծայուած այս գործը մաքուր տպագ-
րութեամբ և անգլիական կաղնով
գեղեցիկ կերպիւ պատրաստուած
կը ծախուի ամեն գրավաճառաց խա-
նութենէն 'ի դին 2 ֆրանք :

ԲԵՐԻՍՏՈՆԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

Հայաստանաց Ս. Էփէմաց

Գրեց Գարեգին Վ. Սրուանձտեանց

Երեսը Դէ

Հայաստանաց եկեղեցւոյ բաղ-
մարդին վարդապետին երկասիրած
սոյն կարեւոր դասագիրքը, որոյ ա-
ռաջին տպագրութիւնը սուղ միջոցի
մէջ սպառուցաւ, երկրորդ անգամ 'ի
լոյս ընծայեցաւ վերաճնութեամբ
Արժ. հեղինակին :

Սոյն մատենիկը 19 գեղեցիկ պատ-
կերներով 144 երեսէ կը բաղկանայ և
կը ծախուի Երեսի համի Զինկիրէն
հաստէսի թիւ 2, Ս. Ղուկասեան գը-
րատունը և ուրիշ գրավաճառաց քով-
դին 60 փարա արծաթ :

ՄՈՐԻՍ ԿԱՍ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱՎԷՊ


ՏԵՒԻ Զ. Գառնաշ

Թարգմանեց Գառ. Ստիքիսի Գ. Հարէնց

Ըստ յանձնարարութեան Արժ. Գ. Վ.

Սրուանձտեանցի

Ամեն կարգի անձանց համար աշ-
խատանքութեան և խնայողութեան
աղբու օրինակներ պարունակող սոյն
ընտիր բարոյակէպը, որ 250 ութա-
ձալ երեսէ կը բաղկանայ, մաքուր
տպագրութեամբ հրատարակուած
լինելով, խիստ դիւրագին, այսինքն
հատը մէկ քառորդ Սէնթիմոն կը ծախ-
ուի ամեն Հայ գրավաճառաց քով :



ԱՆԿՈՂՆԱՐԱՆ ԿԱՍ ՄԱՀԱՃԱԿԱՆ

Աղբիւ և հասարակ քարեօլաներ
երկաթէ և արդյոք, ածան գիններով
կը ծախուի, Կ. Պոլիս Ղալաթիա Մի-
նասեան և ընկերաց Ամերիկայի մա-
ղաղան :



ԱՐԴՈՒԿ

Այս ձև իւթիւններուն ամենէն ա-
ղէկ տեսակը որուն մէջ կրակը չը մա-
րիւր և աղէկ կը գործէ, կը ծախուի
Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ըն-
կերաց Ամերիկայի մաղաղան :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՂԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵԼ ԹՈՒԼԻՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երեւոյն Երեւոյն	Թի-
10 15	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 32	
11	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 20	
11 30	Բ. Ա. Գալաթիէն Երեւոյն, Մէջ, Պէյլիք, Թար, Երեւոյն, 34	
12 30	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 48	
1 15	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 33	
2 15	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 32	
3 15	Բ. Ա. Գալաթիէն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, 20	
4 30	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 34	
5 30	Երեւոյն, Մէջ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Երեւոյն, 33	
6 15	Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 4	
8	Բ. Ա. Գալաթիէն Երեւոյն, Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, 49	
10 15	Մէջադ, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 22	
11	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 25	
11 30	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 2	
12 45	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 22	
1 15	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 2	
2	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 12	
2 30	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 25	
3 30	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 48	
8 30	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 2	
10	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 12	
10 45	Արնալ, Գալաթիէն, Սթէն, 2	
10 15	Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 12	
11	Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 24	
11	Արնալ, Վանիք, Սթէն, Գալաթիէն, Գալաթիէն, 4	
12	Պէյլիք, Թար, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 17	
1 30	Պէյլիք, Թար, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 49	
3 15	Պէյլիք, Թար, Պէյլիք, Թար, Երեւոյն, Սթէն, 24	

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց 'ի կիրակի և առի օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Ղա-
լաթիա Սանտրոգըլար Ճատտէի թիւ
198, Նոթ իսկ Մասիսի խմբագրատու-
նը : Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
րարուաց գրասենեակները .

ՁՄԻՆՈՒՆԻՍ. Ստեփանէ Զֆ. Տէտէան.
ՆԻԿՈՒՄԻՆԻՍ. Խոսրով » Խալիսեան.
ՊՐՈՒՍՍ. Ստեփանէ Զֆ. Թանկէրեան.
ՌՈՏՈՒՍ. Արժ. Տ. Արիստակէս ա-
ւաղ քահանայ Գեղեցեան.
ԱԳՐԻՍ. ՆՈՒՊՈԼԻՍ.
ՍՍՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԵՉՈՒՆ. Ս. Եթմէնեան Զֆ. Զնտի.
ԱՄՍՍԻՍ.
ՍԵՐԱՍՏԻՍ. Նաղարէ Զֆ. Յ. Իս-
թամպուլեանց.
ԵԻԴՈՒԿԻՍ.
ԲԱՐՈՅԱՎԷՊ և ՏԵՐԱՄ. Կերակու Զֆ.
Ս. Ղալաթիէն.
ԵՐԶՆԿԱ. Թաղէտ Զֆ. Բաղրատու.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻՍ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԻՐՏ. Թաղէտ Զֆ. Թաղ-
էան.
ԵԴԵՍԻՍ. Գեորգ Զֆ. Ոսկերչեան.
ՄԱՐՍՇ.
ՅՕԲՇԱՆ. Յէրհայտ աղա Ս. Յէրհայտ.
ԼԵՆ.
ՏՓԻԹ. Պ. Նիկողայոս Տ. Ղալաթիէն.
ԿԱՆԱՍՏԱՆ. Պետրոս աղա Հէքիմեան.

4 15 Գալաթիէն, Ս. Զիսար, Գալաթիէն, Վանիք, Պէյլիք, 22
Գալաթիէն, Ս. Զիսար, Գալաթիէն, Վանիք, Պէյլիք, 25
8 45 Պէյլիք, Պէյլիք, Բաղաթ, Գալաթիէն, Ս. Զիսար, 25
Գալաթիէն, Վանիք, Պէյլիք, Պէյլիք, Գալաթիէն, Ս. Զիսար,
(Ուրաթ օրերը Բիթլիք փաշա մահալէն) :

ԿԱՍՈՒՐՁԵՆ ԵՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երեւոյն Երեւոյն	Թի-
12 15	Գալաթիէն, Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, 4	
12 30	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 32	
1 30	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 20	
2 30	Գալաթիէն, Սթէն, Գալաթիէն, Սթէն, Սթէն, 34	
3 45	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 33	
5	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 49	
6 15	Գալաթիէն, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 25	
8	Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 22	
9 15	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 32	
10	Բ. Ա. Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 33	
10 30	Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 48	
10 45	Պէյլիք, Գալաթիէն, Գալաթիէն, Սթէն, Սթէն, 34	
11 15	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 19	
12	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 25	
12 30	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 2	
1 30	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 12	
2	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 25	
3	Պէյլիք, Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, 48	
7 30	Պէյլիք, Սթէն, Գալաթիէն, Սթէն, Սթէն, 2	
9 15	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 12	
10	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 2	
11 15	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 25	
11 40	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 2	
12	Պէյլիք, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 22	
1 30	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 21	
3	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 22	
9	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 20	
9 45	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 17	
10 30	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 21	
11 15	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 12	
11 30	Գալաթիէն, Սթէն, Սթէն, Սթէն, Սթէն, 4	

ԻԿՈՒԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երեւոյն Երեւոյն	Թի-
11	6 15	11 30
11 30	7	11 45
12	8 15	12 15
12 30	8 35	12 45
1	9 15	1 15
1 25	9 35	1 40
2	10	2 15
2 30	10 25	2 45
2 55	10 45	3 10
3 30	11 5	3 45
4	11 25	4 15
4 30	11 40	4 40
5 5	12	5 15
5 45		6 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Երեւոյն Երեւոյն	Թի-
11 30	5 25	11 30
12	6	12
12 30	6 35	12 30
1	8	1
1 30	8 40	1 30
2	9 20	2
2 30	10	2 30
3 5	10 30	3 5
3 45	11	3 45
4 30	11 30	4 30
5	12	5